

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՐՄԱՇՁԲ-2022/20Ծ-2**

ք. Երևան

«24» 08 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քարավան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված /Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 4+000-կմ 9+000 հատվածի վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 240 օր՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 550 000 000 (երեք միլիարդ հինգ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 591 666 667 (հինգ հարյուր իննսունմեկ միլիոն վեց հարյուր վաթսուվեց հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

* (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Քարավան» ՍՊԸ
ԼՂՀ, Ասկերանի շրջ., գ. Բերքաձոր
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի
մասնաճյուղ
ՀՀ 1150012884694606
ՀՎՀՀ 90012365
տնօրեն
Հ. Հակոբյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՉԱՓԱՐԱԺԻՆ 2
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 4+000 -կմ 9+000 հատվածի
վերակառուցման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	169973	2296	390258008
2	206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	99154	3200	317292800
3	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	77542	2768	214636256
4	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ³ 2.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	8615	3854	33202210
5	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	3852	2543	9795636
6	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2կմ (հարթում. ջրում. խտացում)	մ⁴	35286	2722	96048492
7	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 3կմ (հարթում. ջրում. խտացում)	մ⁵	44678	2898	129476844
8	Նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	89239	2775	247638225
9	Նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ³ 2.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	9915	3854	38212410
10	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	2002	1934	3877874
11	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ³ 2.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	207	2344	485208
12	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում. ջրում. խտացում)	մ³	2050	1494	3062700
13	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	17382	2243	38987826
14	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	25527	2378	60703206
15	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 3կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	11417	2509	28645253

16	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում իջատեղերի հետադարձ լիցքի համար	մ³	866	1360	1177760
17	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում խողովակների հետադարձ լիցքի համար	մ³	565	1360	768400
18	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում գյուղտեխնիկայի անցման հետադարձ լիցքի համար	մ³	240	1360	326400
19	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում կողնակների լիցքի համար	մ³	5288	1360	7191680
20	33r-III կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	29416	1727	50801432
21	33r-III կարգի բնահողի մշակում բուլղոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 2.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	3268	2224	7268032
22	9e-II կարգի բնահողի մշակում բուլղոզերով տեղափոխում 50մ կուտակում. բարձում էքս. 1.25մ3 2.տ. ա/ի և տեղափոխում 2կմ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	16421	890	14614690
Աստիճանների կառուցում					
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	7680	2356	18094080
2	Աստիճանների կառուցում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում բուլղոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	7680	572	4392960
3	Աստիճանների կառուցում 10e-IV կարգի բնահողում բուլղոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	804	273	219492
4	Աստիճանների կառուցում 33r-III կարգի բնահողում բուլղոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	972	252	244944
Ընդամենը I					1717422818
II. Կողային առուներ					
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ.	մ³	857	6583	5641631
2	206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ.	մ³	656	10982	7204192
4	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	814	3414	2778996
5	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	43	14511	623973
6	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ³	623	3414	2126922
7	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	33	18574	612942
10	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ³	82	2273	186386
11	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	4	7929	31716
12	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ³	1292	2000	2584000
13	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	68	5174	351832

14	9բ-II կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	977	1066	1041482
15	Կողային առուների իրականացում 9բ-II կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ տեղափոխում 2կմ պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	52	3331	173212
Ընդամենը II					23357284
III. Կողային առուների ամրացում					
1	33բ-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 2.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	406	2025	822150
2	33բ-III կարգի բնահողի մշակում և բարձում ձեռքով ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորության վրա	մ³	45	5174	232830
3	10բ-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 2.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	28	2273	63644
4	10բ-IV կարգի բնահողի մշակում և բարձում ձեռքով ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորության վրա	մ³	3	7929	23787
5	Կողային առուների ամրացում Ե-8 հավաքովի սալերով (49x49x8սմ). խճային հիմքի վրա	հատ	10713	5123	54882699
Ընդամենը III					56025110
IV. Կողնակներ					
1	10բ-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում կողնակների լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում) h=26սմ	մ³	2151	2039	4385889
2	10բ-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում կողնակների լիցք 5կմ (հարթում. ջրում. խտացում) h=26սմ	մ³	3137	2538	7961706
3	Կողնակների ամրացում ավազակոպճային նյութով հմիջ. =10սմ.	մ²	20339	1090	22169510
Ընդամենը IV					34517105
V. Երթևեկելի մաս					
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակոպիճ) h=10 սմ	մ²	64097,6	935	59931256
2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ³ խիճ (20-40) 35% - 9.1մ³ խիճ (10-20) 20% - 5.2մ³ խիճ (5-10) 10% - 2.6մ³ խիճ (0-5) ավազ 25% - 6.5մ³ ջուր-1.1մ3	մ²	38952,6	2060	80242356
3	Խոշորահատիկ բարձր ծակուտկենությամբ ա/բ h=6սմ	մ²	37406,6	5260	196758716
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	37406,6	6900	258105540
5	"Ե" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ²	37406,6	5100	190773660
Ընդամենը V					785811528
VI. Իջարեղեր և մուրքեր					
5	20ա-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	570	2355	1342350
6	206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	1220	2381	4002820
7	Նախապես փխրեցված 20ա-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 2.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	570	2775	1581750
8	Նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 2.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	1220	2775	3385500
9	10բ-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	226	1937	437762

12	10e-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձրում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում լիցք 2կմ միջին հեռ. (հարթում. ջրում. խտացում)	մ³	866	2174	1882684
Ընդամենը VI					12632866
VII. Երթևեկելի մաս					
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակույիճ) h=10 սմ	մ²	1306,34	1000	1306340
2	Խճավազային հիմք (C - 5) h=15 սմ խիճ (40-70)- 10% - 1.95մ³ խիճ (20-40)- 35% - 6.825մ³ խիճ (10-20)- 20% - 3.9մ³ խիճ (5-10)- 10% - 1.95մ³ խիճ (0-5)- ավազ 25% - 4.875մ³ ջուր-1.1մ³	մ²	1306,34	1600	2090144
3	Ե տիպի մանրահատիկ խիտ ա/բ h = 5 սմ	մ²	1202,84	6300	7577892
Մետաղական խողովակներ Ø 530մմ					
1	Ավազակույճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ³	1,463	10000	14630
2	Մետ. խողովակների Ø 530x7մմ տեղադրում	գժմ	22,5	138000	3105000
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գժմ	21,3	3770	80301
4	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ³	1,6	125000	200000
5	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	6	1580	9480
Մետաղական խողովակներ Ø 273մմ					
1	Ավազակույճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ³	0,703	10000	7030
2	Մետ. խողովակների Ø 273x5մմ տեղադրում	գժմ	18,9	45500	859950
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գժմ	18,5	1938	35853
6	Խողովակի և 50x60x300սմ վաքի միացման միաձույլ բետոն	մ³	0,016	126000	2016
Ընդամենը VII					15288636
VIII. Մայթեր					
3	Բետոնե սալիկ ձևավոր. մոխրագույն h=6սմ	մ²	166,5	9060	1508490
4	Ցեմենտավազային չոր խառնուրդ h=9սմ (70% ավազ. 30% ցեմենտ)	մ²	166,5	4330	720945
5	Միաձույլ բետոնե եզրաշար B-15 10x20սմ - ավազակույճային շերտ h=5սմ. 1գժմ-0.005մ3	գժմ	90	1550	139500
6	Միաձույլ բետոնե եզրաշար B-20 20x50սմ - ավազակույճային շերտ h=5սմ. 1գժմ-0.01մ3	գժմ	132	7574	999768
Մետաղական բազրիքի տեղադրում 257.25գժմ /105սեկցիա		հատ	53	45960	2435880
1	60x30մմ/3.0մմ	գժմ/կգ	129.85/497.326		
	60x40մմ/3.0մմ	գժմ/կգ	162.71/699.653		
	60x30մմ/3.0մմ	գժմ/կգ	117.13/448.608		
	40x30մմ/3մմ	գժմ/կգ	89.04/257.326		
	40x30մմ/3մմ	գժմ/կգ	106.53/307.872		
	70x40մմ/4մմ	գժմ/կգ	5.3/32.807		
Ընդամենը VIII					5804583
IX. Ջրահեռացում երթևեկելի մասից					
1	Երկայնական վաք Ե-2-20	գժմ	5870	14800	86876000
Ջրնետում կողնակից					
1	10eIV կարգի բնահողի մշակում բարձրում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	84	7940	666960
2	Հավաքովի Ե-4-20 բետոնե բլոկների տեղադրում	հատ	168	10508	1765344
3	Հավաքովի Ե-5 բետոնե բլոկների տեղադրում	հատ	125	17900	2237500
Վաք լիցքի շեպի վրա					
1	10eIV կարգի բնահողի մշակում բարձրում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	44,7	7940	354918

2	Հավաքովի Ե-6 վաքերի տեղադրում	հատ	677	14000	9478000
	Հոսքամարիչ լիցքի շեպի տակ				
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	11,55	2400	27720
